Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____» _____ 2025թ. №_____-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով, և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի հ.259-Ն որոշումը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Սանասար Բեգլարյանին սեփականության իրավունքով պատկանող Մ.Մելքոնյան փողոցի հ.50/3 հասցեում՝ տարածագնահատման 5-րդ գոտում, գտնվող 303.54 քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.18042022-01-0271 վկայական), Մ.Մելքոնյան փողոցի հ.50/3 հասցեին կից Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող, տարածագնահատման 5-րդ գոտում գտնվող 303.54 քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելուն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկվող նախագծով նախատեսվում է Սանասար Բեգլարյանին սեփականության իրավունքով պատկանող Մ.Մելքոնյան փողոցի հ.50/3 հասցեում գտնվող 303.54 քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.18042022-01-0271 վկայական) փոխանակել Մ.Մելքոնյան փողոցի հ.50/3 հասցեին կից Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող 303.54 քմ մակերեսով հողամասի հետ:

Մ.Մելքոնյան փողոցի հ.50/3 հասցեում գտնվող 303.54 քմ մակերեսով հողամասը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.18042022-01-0271 վկայականի, հանդիսանում է Սանասար Բեգլարյանի սեփականությունը:

Մասնագիտական որակավորում ունեցող «ԱԲԻՏ» ՍՊ ընկերության եզրակացության համաձայն՝ Մ.Մելքոնյան փողոցի հ.50/3 հասցեում գտնվող Սանասար Բեգլարյանին սեփականության իրավունքով պատկանող և Մ.Մելքոնյան փողոցի հ.50/3 հասցեին կից Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի շուկայական արժեքները կազմել են համապատասխանաբար՝ 36.100.000 և 32.400.000 ՀՀ դրամ: Սեփականատիրոջ կողմից տրամադրվել է համաձայնություն՝ տարբերություն կազմող մասից հրաժարվելու վերաբերյալ:

Հողամասերի փոխանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Սանասար Բեգլարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի մի հատվածը Մ.Մելքոնյան փողոցի շինարարության արդյունքում դարձել է ճանապարհի կանաչապատված հատվածը (սիզամարգ) և անհնարին դարձել սեփականատիրոջ կողմից այն լիարժեք օգտագործել:

Հողամասերի փոխանակման արդյունքում կբարձրանա տարածքի օգտագործման արդյունավետությունը և սեփականատիրոջը հնարավորություն կընձեռնվի լիարժեք օգտագործել հողամասը, ապահովել հողամասի հետագա կառուցապատումն ու բարեկարգումը՝ ստեղծելով առավել կանոնակարգված քաղաքաշինական իրավիճակ:

Փոխանակվող հողամասերն ընդգրկված չեն հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, գտնվում են Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 5-րդ գոտում:

Համաձայն հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի

սեփականությունը հանդիսացող հողամասերի փոխանակումը դրանց օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կատարվում է համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ մշակվել է Երևան քաղաքի ավագանու որոշման սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ